



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

Կենտրոն, Մահմանադրության հրապարակ 1
 Հեռ. (0223)2-23-45 հեռ./ֆաքս (060)460145
 28 օգոստոս 2014թ. N 273


ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐՀՈՒՄ
ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂՆԵՐ՝
Ա. ՄԱՅԱԿԱՆՅԱՆԻՆ
ԵՎ Ժ. ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հրազդան քաղաքում 2014 թվականի հունվար-օգոստոս ժամանակահատվածում շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված աշխատանքները /աղբահանություն, սանիտարական մաքրում, ծառատունկ, կանաչ տարածքների մշակում և ընդլայնում, բարեկարգման այլ աշխատանքներ/ կատարվել են Հրազդան քաղաքի բյուջեով նախատեսված միջոցներով:

Մշակվել և իրականացվում են ծրագրեր փոքր աղբամանների գնման, «Կոտայքի մարզի կոշտկենցաղային թափոնների» ծրագրի իրականացման, բակերի կանաչապատման և բարեկարգման, մանկական ժամանցի վայրերի ստեղծման, քաղաքային զբոսայգիների վերականգնման և արդիականացման նպատակով:

Համայնքում ջրամատակարարման վատթարացման և կատարվող աշխատանքների հարցի վերաբերյալ հայտնվում է, որ Հրազդան քաղաքում ջրամատակարարման աշխատանքների նպատակն է հին խողովակաշարերը փոխարինել նորով, որով պայմանավորված՝ ջրամատակարարումը ոչ թե վատթարացվում է, այլ լավանում:

Ջրամատակարարումը շարունակվում է կատարվել գրաֆիկի համաձայն, իսկ ժամանակավոր անջատումները կատարվում են հին համակարգից նորին անցնելու, միացումներ կատարելու ժամանակ և ընդհանուր ջրամատակարարման ժամանակացույցով ժամաքանակը պահպանվում է, իսկ նոր համակարգով ջրամատակարարման ժամանակաքանակը՝ հակառակը ավելանում է:

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝  **Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ**